Արձանագրություն N 2
Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան 06.12.2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մարտիրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Ղազարյան, Գ. Սաֆարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Գ. Մարտիրոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ eauction.armeps.am կայքի միջոցով հրապարակված գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանել 2018 թվականի դեկտեմբերի 3-ը, ժամը՝ 12:00-ն, իսկ հակադարձ աճուրդը սկսվել է 05.12.2018 թվականին 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

2. «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Գ. Մարտիրոսյան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	ԷԼԻՏԱ ԷՍՎԵ ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գնային առաջարկների մասին

(Գ. Մարտիրոսյան)

3.1 Աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգի կողմից ավտոմատ եղանակով ներկայացրած աճուրդի արդյունքների համաձայն մասնակիցը ներկայացրել է հետևյալ վերջնական գնային առաջարկը.

Չ/Հ	Ձեռքբերվող ծառայության անվանումը	նախահաշիվ	ԷԼԻՏԱ ԷՍՎԵ ՍՊԸ
			/առանց ԱԱՀ/
1	ՀՀ անկախության 28-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 28-րդ մարզական խաղեր /Կենտրոն վարչական շրջան/	1000000	

2	Ազգային ժողովի գավաթի խաղարկություն 1-6-րդ դաս.-ի միջև /թեթև աթլետիկա//Կենտորն վարչական շրջան/	350400	
3	ՀՀ անկախության 28-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 28-րդ մարզական խաղեր /Դավթաշեն վարչական շրջան/	600000	
4	ՀՀ անկախության 28-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային մարզական խաղեր /Աջափնյակ վարչական շրջան/	400000	
5	Սուսերամարտի բաց առաջնություն /Արաբկիր վարչական շրջան/	179800	179000
6	Շախմատի բաց առաջնություն /Արաբկիր վարչական շրջան/	204600	200000
7	ՀՀ անկախության 28-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 28-րդ մարզական խաղեր /Արաբկիր վարչական շրջան/	465600	465600

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Գ. Մարտիրոսյան)

4.1 Աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգի կողմից ավտոմատ եղանակով ներկայացրած աճուրդի արդյունքների համաձայն՝ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվում.

-5,6,7 չափաբաժինների մասով՝ ԷԼԻՏԱ ԷՍՎԵ ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

4.2 Մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա է հրավերով պահանջվող դիմում-հայտարարությունը և դա համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

4.3 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

5 . ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Գ. Մարտիրոսյան)

5.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 06.12.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

6 . Ընթացակարգը 1, 2, 3, 4-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

(Գ. Մարտիրոսյան)

6.1 Հաշվի առնելով, որ 1, 2, 3, 4-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկներ չեն ներկայացվել, նշված չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած,

6.2 Հաստատել ընթացակարգը 1, 2, 3, 4-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ. Մարտիրոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 5.1 կետում նշված փաստաթղթի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Գ. Մարտիրոսյան

Անդամներ՝ ---------- Է. Ղազարյան

---------- Գ. Սաֆարյան

Քարտուղար՝ ---------- Ի. Եղիազարյան